ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

14.09.2012թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավանի գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ / ծածկագիր 2.3-1 /:

Գլխավոր մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ

ա) սահմանված կարգով կազմում և ներկայացնում է համայնքի բյուջեի նախագիծը.

բ) ապահովում է համայնքի բյուջեի նպատակային օգտագործումը.

գ) սահմանված կարգով կազմում և ներկայացնում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը.

դ) իրականացնում է գյուղապետարանի հաշվապահական հաշվառման վարումը, վճարման փաստաթղթերի կազմումը և ներկայացումը , մասնակցում է ֆինանսատնտեսագիտական գործի կազմակերպմանը.

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան մարմիններ ներկայացնելու համար կազմում է ամսեկան , եռամսյակային և տարեկան հաշվետվություններ.

զ) կազմում և ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր.

է) իրականաացնում է սույն պաշտոնի անձնագրով սահամանված այլ լիազորություններ.

- Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է՝

  ա)բարձրագույն մասնագիտական կրթություն , համայնքային կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ , կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ , կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

  բ)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

  գ)տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար (կարդում , կարողանում է բացատրվել) լեզվի:

- Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012 թվականի հոկտեմբերի 17 -ին ժամը 13.00-ին Նորավանի գյուղապետարանի շենքում:
- Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
- դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս).
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
- հայտարարություն այն մասին , որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

- հայտարարություն այն մասին , որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականների պատճենները.
- մեկ լուսանկար 3Х4 սմ չափսի.
- անձնագրի պատճենը.
- սոցիալական քարտի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու , ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Նորավանի գյուղապետարան և ՀՀ Արմավիր մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏԾ վարչություն (հասցեն՝ ք. Արմավիր Աբովյան -71, հեռ՝. / 0237 / 2-07-70):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00-ն , բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2012 թվականի հոկտեմբերի 1 - ը: